# ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 189բ.— Յովհաննէս հնազանդութիւն, աւրհնութիւն որ կարդայ, գովութիւն որ 'լսէ, փառք տուողին և յիշատակ գրչիս: Ամէն:*

*Եւ զեղկելի գծողս սուտանուն Յովաննէսս աղաչեմ միով ողորմի և յիշել ի Տէր: Ամէն:*

*Թ. 238ա.— Եւ զեղկելի գծողս սուտանուն Յովանէսս աղաչեմ յիշել ի Տէր: Ամէն:*

*Թ. 238բ.— Փա՛ռք անսկիզբն անեղ էին և անսահման էացուցչին ի բոլոր էիցս հանցուք աւրհնութիւն և փառք Հաւր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս: Ամէն:*

*·Արդ, գրեցաւ Սուրբ Աւետարանս ի թվաբերութեանս Հայոց ի ՌՁԵ (1636 թ.), ի քաղաքն Կոստանդինուպօլիս, ի դուռն Սրբոյն Սարգսի զօրավարին և որդոյ նորա Մարտիրոսին: Ի հայրապետութեան Տեառն Սրբոյ էջմիածնայ Տէր Փիլիպպոսի ամենայն հայոց կաթուղիկոյսի, և ի մերոյս աթոռակալութեանն Կոստանդինուպօլսի Տէր Զաքարիայ արհիեպիսկոպոսի, և ի բռնակալութեանն տաճկաց Սուլթան Մուրատ խոնդքարին, ի դառն և ի նեղ ժամանակիս: Ձեռամբ հող և մոխիր և ոտից փոշի յետնեալ և մոխրամած սուտանուն Յովանէս իրիցուս, որ զանունս ունիմ և զգործն ոչ, այլ աստարացեալ ի սուրբ անուանէ, և հեռացեալ ի բարի գործոց:*

*Արդ, երես ի գետին դնելով աղաչեմ զհանդի*(բ. 239ա)*պողքդ այսմ սուրբ տառիս, կարդալով կամ աւրինակելով, կամ հարևանցի տեսանելով յիշեսջիք միով Հայր մեղայիւ, կամ Աստուած ողորմայիւ մի, զյետնեալս և զփոշիս զՅովաննէս էրէցս, և զծնօղսն իմ զկենդանիս և զհանգուցեալսն: Եւ Տէր Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ յիշողացդ հատուսցէ յիւրում արքայութեանն: Ամէն:*

*Հայր մեր որ յեր...:*

*Յիշեցէք ի բարին ստացող Սուրբ Աւետարանիս Ամիրասաթէնց խաւջայ Սաֆարն և կողակիցն իւր խանզատէն և իւր որդին ըՍտեփանոսն և դստերքն իւր Կատարինէն, Սարայխանումն, Մատիլինէն, հարսն իւր Լէյէ, և որ կարդայ կամ օրինակէ լի բերան ողորմի ասէ և ինքն յիշեալ լիցի ի Տեառնէ:*

*Կրկին անգամ յիշեցէք խօջայ Սաֆարն, և կողակիցն իւր խանզատէն, և անդրանիկ որդին իւր ըՍտեփանոսն, որ խոստացան Սուրբ Աւետարանս ի հալալ ընչից իւրոց ետուն վաղմ առ դրան Սուրբ ըՍտեփանոսի յիշատակ իւրն և իւր ծնօղացն,* (բ. 239բ) *և որ կարդայ լի բերանով ողորմի ասէ և իւր հոգւոյն Աստուած ողորմի զալստեան իւրում: Ամէն:*

*Հայր մեր որ յեր...:*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 1բ.— Ստացեալ եղև Սուրբ Աւետարանս ի յերկրին Պարսից, ի մայրաքաղաքն Շօշ, և ի գիւղաքաղաքն Նոր Ջուղայ, յամի Տեառն ԱՌՉԾԴ (1754 թ.) և Ներամական յունվարի ԺԵ, ի ժամանակս բռնակալութեան իշխանին Աղուանից Ազատխան կոչեցելոյ, որոյ հզօր զօրութեամբ և մեծաւ պատերազմիւ յաղթեաց իշխանին պարսից Քէրիմեան կոչեցելոյ և ընդ իւր իշխանութեամբն գրաւեաց զվաեւլշարենակ և զերապայծառ արքայանիստ մայրաքաղաքն պարսից ընդ նմին և զամենայն միրձակայ գաւառս նորին և սկսաւ պահանջել աննախայարար զհարկս մեծամեծս և ծանունս ի բնակչաց երկրին յորմէ սաստիկ տագնապէն և անհնարին աղէտիցն...առ հասարակ չքայվորիլ էր անսալն բռնակալին և ի նեղեալ նոցա ի տանջանաց հարուածոց զանից վաճառեցին զամենայն կահս և կարասիս իւրեանց թերևս նօքօք զանիլ փրկութիւն* (բ. 2ա) *անձանց իւրեանց որոց ահարկու և սարսափելի աղէտիցն բնակիչքն գիւղաքաղաքին Ջուղայու առաւել վշտացեալ անկան ներթզուածութեանց քանզի զայլան, քանզի բայց ի կահից և ի կարասեաց և ընչից տանեաց իւրեանց զորս վաճառեցին ի պատկութենէ տակնապին ձեռնարկին նաև անօթս սրբոց եկեղեցեաց վաճառել, որոց բազմաց անօթոցն մին եղև Սուրբ Աւետարանս, որ վաճառեցաւ եղև ի ձեռն ումեմն մահմետականի անհաւատի, զոր ես նուաստագունեղ և տրուպս ամենից Օհան, որդի ումեմն Տէր Ղազար քահանայի Գանջեցւոյ, տեսեալ զայս ի ձեռն անօրինին, գնեցի ի նմանէ: Աստանօր հայցեմ խոնարհաբար պատահողացդ Սրբոյ Աւետարանիս յիշել ընթերցողն սրտիւ զհայրն իմ սրբակրօն և մաքրակենցաղ Տէր Ղազար մեղասլքաւէլ քահանայ և զմայրն իմ ի Քրիստոս հանգուցեալ Խանփերին և զեղբայրն իմ Յովսէփ, յուսկ հետոյ և իմ նուաստութիւնս, որ եղէ գնող Սուրբ Գրոյս և որք յիշին միով Հայր մեղաւ ընկալցին զվարձս բարեաց ամենակարող Տեառնէ, յամի Տեառն 1754 և Հայոց ՌՄԳ, ամսեան յունվարի 15 եղև վերջս:*

*Թ. 239բ.— Աւարտ եղև թուին ՌՃԵ (1656 թ.) և յիշատակ եռուն ի դուռն Սուրբ Ստեփանոսի, որոյ Տէր ողորմեսցի, ամէն:*

*Իւր սիրելի մօր յիշատակին կը նուիրէ Հրանտ Նասիպեան, Գահիրէ, 15.3.1956:*

## № 228
## ԱՂՕԹԱԳԻՐՔ

Թերթեր՝ *180:*— Պրակներ՝ *16, յուրաքանչյուրը 12-ական թերթից, իսկ ԺԶ՝ Ե, Բ, Թ և ԺԴ պրակները 10-ական թերթից են:*— Մեծությունը՝ *11,1×8,4×3,3*

* *Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից և ԺԲ-ից:*

սմ.։— Նյութը՝ դեղնած և կեղտոտած թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով զարդեր են նկարված։ Կազմի երկու բռնիչներն ընկել են։— Պահպանակներ՝ չկան։— Վիճակը՝ բավարար։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ թղթերը՝ 1, 2, 175—180։— Տողերը՝ 12։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ ձեռագիրն ունի շատ հասարակ զարդագրություն, նկարված հասարակ ոճով։ Կան մի հատ հասարակ կիսախորան (թ. 3ա), մի գլխազարդ (թ. 98ա), մի թռչնագիր (թ. 69բ), չորս զարդագիր և հինգ էլ լուսանցազարդ, որոնք բոլորն էլ նկարված են շատ հասարակ ոճով։— Գրիչը՝ Գրիգոր քահանա։— Պատվիրատուն՝ Մատթեոս։— Ծաղկողը՝ շատ հավանաբար նույնինքն ձեռագիրը գրողն է։— Ժամանակը՝ 1598 թ.։— Վայրը՝ Տումարզայի (Կեսարիա) Ս. Աստվածածին վանք։— Ծանոթություն՝ Թբիլիսիի բնակիչ Գևորգ Հակոբի Բայանդուրյանը սույն ձեռագիրը նվիրել է Մայր Աթոռի ձեռագրատան, 1962 թվականի ապրիլ ամսին։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն ձեռագրի վերջին մասում, հատկապես թ. թ. 119ա-ից մինչև 121բ և թ. 139բ-ից հետո, օգտագործված են հայկական հին խազերը։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 173ա.— Փա՜ռք ամենասուրբ Երրոր-(թ. 173բ)դութեանն, և միաձնութեան, Հաւր և Որդոյ և Հոգոյն սրբոյ յօիտեանս յօիտենից ամէն։ Գրեցաւ Սուրբ Աղօթամատոյցս ի թվկ. ՌԽԷ (1598 թ.), ձեռամբ Գրիգոր անարժան քահանայիս, ի գիւղն ի Տումարզծայ, ի դուռն Սուրբ Աստուածածնին և ամենայն հաւագեալ սրբոց որ աստ կան։ Եւ զծընողք իմ մահտեսի Անդրիկն, որ փոխեր առ (թ. 174ա) Քրիստոս, և զԵղնիկն, և զամենայն նախնիքս մեր, կենդանիս և զհանգուցեալս, և որ յիշէ յիշեալ լիցի ինքն ի Տեառնէ Աստուծոյ մերոյ։ Ամէն։

Դարձեալ աղաչեմ զձեզ, յիշեցէք ի յաղաւթս ձեր զըստացողս սորա զՄաթէոսն, զհայրն իմ Խ... և զմայրն իմ Պ...։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— ԲԳԴ ես ասացի ի վերայ ալինկն աւուրծ իմոց արհաշի րայ ի տվէ և ի գիշերի և ամենայն ժամ խորհուրդ։

Թ. 1բ.— Թամար, Յովանէս, Թորոս, Արտայա...։ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս Մարիամ։

Թ. 2ա.— Բաղամանկան, թվականի, դամբանական, թվականի։

Թ. 2բ.— Ասամանական։

Թ. 174բ.— Այս աղաւթ մատուցուք։

Թ. 175բ.— 1282 դեկտեմբերի իննըն Մելքեսէթի Նըշանըն խուցն տարինք, 1283 փետըրվարի 3-ին սուրբ պսակն եղև, Աստուած վայելումըն տացէ, մի բարձի ծերանայն։ Ամէն։ Տէր Աստուած Յիսուս Քրիստոս (Բոլոր թվանշանները գրված են արաբերեն)։

Թ. 176բ.— Ախամսիկ սէմատէսին մուգատէս օլա, սէնին կէլէ, սանըն ջաննաթ միսալի փատիշահլըն ...սէնէն ամրին բազմիլ օչայ, չիճաիի սէմատէ, քէզալէք վէ զէմինտէ. պիզիմ էյփիյտա ակմակմզի իհսան էյլա պու գիւն վէ պօրճու զիմմէրմզի պիզա ինամ էյլա, նաճա պիզ տախի պօրճլումուզուն պօրճու չի ինամ ու աֆ էտարիզ, պիզի իզվաու իմիի հանա սօրչմա խէլաս էյլա պիզե շարտան։

Թ. 177ա.— Արամս քէ սէմատէսին։

Թ. 177բ.— Այս աղոթամատույցը պատկանում է Թբիլիսիի բնակիչ Գևորգ Հակոբի Բայանդուրյանին 1931 թվից։

Ի հիշատակ հանգուցյալ եղբորս՝ Սարգիս Բայանդուրյանի և անհետ կորած քրոջս՝ Արուսյակ Պետրոսյանի, աղոթամատյանս նվիրում եմ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատանը։

29 ապրիլի 1962 թ., Թբիլիսի։ Գևորգ Հակոբի Բայանդուրյան։

Թ. 178բ.— Լաւէ խշաէ իլալլահէ։ Ոյհոհեսց։

Թ. 179բ.— Յիշատակ է աղօթամատուցս Գրիգորին, և Երիգատվսոյին, և Երիչաքային իւրոյ։ Միածնի Կորկայզավրային, և այլ սրբոց։ -

Թ. 180ա.— Յիշատակ է աղօթամատուցս Գրիգորի։

Թ. 181բ.— Դառնացոյցն զաւրս անզգամն։

## № 229

## ՆԱՐԵԿԱՑՈՒ ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

Թերթերը՝ 360։— Պրակները՝ 45, յուրաքանչյուրը 8 թերթից, իսկ Ա՝ 6 և Բ՝ 9 թերթից են։— Մեծությունը՝ 10,5×8×4,7 սմ.։— Նյութը՝ դեղնած և կեղտոտած ողորկ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ, որի վրա ոսկեգույն որոշ զարդեր կան։— Պահպանակները՝ սկզբում կա մի սպիտակ հասարակ թուղթ։— Վիճակը՝ լավ։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ թղթեր՝ չկան։— Տողերը՝ 22։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ նոտրգիր։— Զարդագրությունը՝ ձեռագրի սկզբում կա հասարակ մի կիսախորան (թ. 1ա), ութ հատ գունավոր զարդագրեր (թ. 1ա-ից մինչև թ. 30ա) և ութ հատ էլ գունավոր թռչնագրեր (թ. 1ա-ից մինչև թ. 18բ)։ Կիսախորանում երևում են չորս հատ թռչնիկներ և մի հատ էլ մահիկ և աստղ։ Օգտագործված են դեղին, կանաչ, կապույտ և կարմիր գույները։ Թ. թ. 32բ—152բ՝ մեծատառերը կարմիր ներկով են միայն։ Թ. թ. 157ա—326բ՝ գլխատառերը ավելի մեծացրած են և օգտագործված են կապույտ, դեղին և կարմիր գույները։ Իսկ թ. 327ա-ից մինչև վերջը՝ դարձյալ փոքր կարմիր գլխատառեր են օգտագործված։ Ձեռագրի բոլոր էջերը առնված են ոսկեգույն մի շրջանակի մեջ, 8×5,5 սմ. չափերով։— Գրիչը՝ անհայտ։— Պատվիրատուն՝ անհայտ։— Ծաղկողը՝ անհայտ, հավանաբար նույնինքն գրողն է։— Ժամանակը՝ ԺԸ դար։— Վայրը՝ անհայտ։— Ծանոթություն՝ ստացված է նվեր 1960 թվականի հունիս ամսին Տ. Բաբգեն քահանա Մաղաքյանից (Բոստոն, ԱՄՆ)։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Դրումք աղօթից յօգնաթախանձ բանից ողբերգականաց յանձնարարութիւնք կամաւորականք և ցուցմունք ծածկեցելոց։ Հառաչանք և հեծութիւնք ի դիմաց ամենից անձանց, ասացեալ Սրբոյն Գրիգորի Նարեկայ վանից վանականի և ճգնասէր հսկողի։ Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Թ. 333ա.— Ըստ չորից աւետարանչացն սրբոց յատկացուցի ներհաւաքեցեալ վասն բժշկութեան Փրկչին մերոյ Քրիստոսի, յիւրաքանչիւր տեղեաց գլխաւորեալք առ այսմ, ըստ դիպման ի բուժումըն հոգւոց և մարմնոց։

Թ. 345ա.— Տէր Առաքելի եռամեծի և քաջ հռետորի, աշակերտի երիցս երանելւոյ Գրիգորի Տաթևացոյ տիեզերալոյս վարդապետի արարեալ բանս գովութեան, ի վերայ Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագրի սկզբի պահպանակի վրա).

Փոքրիկ յիշատակ մը առ Ազգիս Վեհափառ Հայրապետ Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս, հայրաբար մեր խոնարհ յարկին իր տուած շնորհաբեր այցելութեան առթիւ, որդիական յարգանօք, տրուպ ծառայ՝ Բարգէն քահանայ Մագսուտեան, երէցկին Աղատուհի և զաւակունք՝ Գրիգոր և Արփի, Պօողոն, 15 յունիս 1960։

Թ. 344բ-ում և թ. 345ա-ում կա մի փոքրիկ կնիք, որ անընթեռնելի է։

## № 230

## ՑԱՍՄԱՒՈՒՐՔ

Թերթերը՝ 696։— Պրակները՝ 59, յուրաքանչյուրը 12-ական թերթից, միայն առաջին և վերջին պրակները պակասավոր են, Ա՝ 7 և ԾԹ՝ 5 թերթից։— Մեծությունը՝ 35,1×25,2×14 սմ.։— Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ, կռնակի մասը քանդվել է։— Պահպանակներ՝ չկան։— Վիճակը՝ բավարար, սակայն տեղ-տեղ թերթերը պոկված են, իսկ սկզբից և վերջից թերի է։— Գրությունը՝ երկսյուն։— Պատարկ բղբեր՝ չկան։— Տողերը՝ 35։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրություն՝ ձեռագիրն ունի գեղեցիկ երկու խորան (թ. թ. 4ա և 453ա), երկու տասնյակ գլխազարդեր և բազմաթիվ լուսանցազարդեր և թռչուններ, զմբեթներ և խաչեր։ Կան բազմահարյուր ծաղկագրեր, զարդագրեր և թռչնագրեր, բոլորն էլ մեծ չափսի։ Հատկանշական է թ. 644ա-ում գտնվող թռչնագիր Ի տառը, որ 14 սմ. երկարություն ունի։ Կան նաև մի քանի հատ մարդագլուխ թռչունների նկարներ, ինչպես, օրինակի համար, թ. 287ա-ում։ Հատկանշանական է թ. 83ա-ի մարդագլուխ թռչունը, որի երկու թևերը ձկներ են, իսկ գլուխը զարդարված է ծաղիկներով։— Գրիչները՝ Ղազար և Մարտիրոս։— Պատվիրատուները՝ Մկրտիչ քահանա, Առաքել, սրա որդին՝ Մարտիրոս քահանա, Յեսամելիք և Պապ։— Ծաղկողը՝ անհայտ։— Ժամանակը՝ ԺԷ դար։— Վայրը՝ անհայտ, հավանաբար Սպահան։— Ծանոթություն՝ Մայր Աթոռի ձեռագրատունը սույն ձեռագիրը նվեր է ստացել Հայաստանից։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Ձեռագրի վերջում գտնվող գլխավոր հիշատակարանը ընկել և կորել է։ Սակայն ձեռագիրն ունի մի քանի հարյուր փոքրիկ հիշատակարաններ, որոնք գտնվում են ամեն մի 2—3 էջում, տողատակում և պարբերությունների վերջում։

Տողատակի հիշատակարանները գրված են թերթերի ներքևում և հիշում են գրչի մասին։ Իսկ պարբերությունների վերջում գրվածները հիշում են ձեռագրի պատվիրատուի մասին։ Հետագայում այս երկրորդ հիշատակարանների վրա կպցված են փոքրիկ թղթեր, որոնց վրա գրված է հետագա մի ստացողի անունը, որը կրկնվում է բազմահարյուր անգամ։

Ստորև տրվում են վերևում նշված հիշատակարաններից մի քանիսը միայն.

Թ. 10ա.— Կարդայ և զանպիտան ծառայս Աստուծոյ զՂազարս յիշեա։

Թ. 16ա.— Ով սուրբ ընթերցող կարդա և զմեղաւոր Ղազարս յիշեա ի Քրիստոս։

Թ. 32ա.— Կարդա և զբազմամեղս յիշեա։

Թ. 36ա.— Կարդա և զանպիտան գրիչս յիշե։

Թ. 30ա.— Արժանացոյ զանարժան Ղազարս տեսութեան լուսոյ Միածնի Որդւոյ քո որ եմ յոյժ խաւարեալ մեղաւք։

Թ. 49ա.— Կարդայ և զամենամեղ Ղազարս յիշեա։

Թ. 67ա.— Ով սուրբ ընթերցող մի մեղադրէր վասնզի անձրեն արար և զիս վիրաւորեաց։

Թ. 88բ.— Վայ ինձ հազար բերան մեղաւորիս։

Թ. 99ա.— Վայ ինձ Ռ բերան թէ որպէս ազատեցայց ի հաղբից նորին։

Թ. 101ա.— Կարդա և զբազմամեղ Ղազարս յիշեա և դու յիշեալ լիցի Քրիստոսի Աստուծոյ։

Թ. 115ա.— Յիշեա և դու յիշեալ իցիս։

Թ. 119ա—Կարդա և զամենամեղ զՂազարիկս յիշեա ի Տէր։

Թ. 125բ.— Կարդա (թ. 126ա) և նորին աղաւթիւքն Քրիստոս Աստուած ձեզ և մեզ առհասարակ ողորմեսցի։

Թ. 130բ.— Կարդա (թ. 131ա) և զանպիտան ծառայս Յիսուսի Քրիստոսի զՂազարիկս յիշեա։

Թ. 132ա.— Կարդա ով եղբայր և սիրելի և զամենամեղ Ղազարս յիշեա։

Թ. 154ա.— Որոյ աղաւթիւք ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Մկրտիչ քահանային և ծնողաց նորին ամէն, այլ և մեղաւոր Ղազարոսի ամէն։

Թ. 166բ.— Կարդա և զանարժան (թ. 167ա) Ղազար գրչիս յիշեա և Տէրն ողորմած ինձ և քեզ ողորմեսցի։

Թ. 174ա.— Վայ զմեղաւք մեռեալս զՂազար գրիչս։

Թ. 175ա.— Կարդա և զանպիտանս Աստուծոյ և մարդոյ զՂազար գրիչս յիշեա ի Տէր։

Թ. 186ա.— Կարդա և զբազմամեղ զՂարիպս յիշեա։

Թ. 189ա.— Զգովասանութիւնս կարդա և զմեղաւոր Ղարիպս յիշեա։

Թ. 192ա.— Կարդա և զանպիտան ծառայս Աստուծոյ յիշեա և Աստուած զքեզ յիշէ։

Թ. 195ա.— Կարդա և զողորմելի զՂարիպս յիշէ։

Թ. 196ա.— Կարդա և զտառապեալ Ղարիպս յիշեա։

Թ. 197ա.— Կարդա և զտառապեալս հոգւով և մարմնով Ղազարս յիշեա։

Թ. 204ա.— Կարդա և վայ տուր մեղաւորիս։

Թ. 208ա.— Կարդա և զմեղաւորս յիշեա։

Թ. 215ա.— Կարդա և վայ ինձ մեղսասիրիս ասա։

Թ. 216ա.— Կարդա և զանհամբերս և զանժուժկալս յամենայն գործոց բարեաց յիշեա։

Թ. 217ա.— Կարդա և զանպիտան ծառայս Աստուծոյ զՂարիպս յիշեա ի Տէր։

Թ. 221ա.— Կարդա և վայ ինձ ամենամեղ ծառայիս Աստուծոյ Ղազար գրչիս։

Թ. 222ա.— Կարդա և զանպիտան գրչակս յիշեա ի Քրիստոս։

Թ. 230ա.— Կարդա և զտառապեալս հոգւով և մարմնով զՂարիպս յիշեա և Աստուած զքեզ յիշեա։

Թ. 235ա.— Կարդայ և բազմամեղիս ողորմիս այս ասաց։

Թ. 238ա.— Կարդա և զբազմամեղ գրչակս յիշեա ի Քրիստոս։

Թ. 246ա.— Կարդա և զմեղաւորս հողս յիշեա։

Թ. 266ա.— Կարդայ և զանպիտանս յիշեա առ Տէր Յիսուս Քրիստոս։

Թ. 274ա.— Կարդա ով սուրբ ընթերցող և զանպիտան ծառայս Աստուծոյ զՂարիպս յիշեա։

Թ. 292ա.— Կարդա և զմեղաւոր ծառայս Աստուծոյ զՂազարս յիշեա ի Քրիստոս։

Թ. 293ա.— Կարդայ և զիս յիշման արժանի արա։

Թ. 298ա.— Ողորմեա ստացողի գրոցս Մկրտիչ քահանային և ծնողաց նորին... և ինձ մեղաւորիս Ղազար գրչի ամէն։

Թ. 316ա.— Կարդա և զամենամեղ Ղազար գրիչս յիշէ։

Թ. 351ա.— Մանաւանդ ստացողի սորա Մկրտիչ քահանային ամէն։

Թ. 352ա.— Կարդա և զանարհեստ զՂազար գրիչս յիշեա։

Թ. 359բ.— Քարոզ ապտակար և ոգէշահ կարդացողաց և լսողաց։

Թ. 361ա.— Կարդա և վայ մեզ որ զմեղս գործեմք և արդարանամք։

Թ. 373ա.— Կարդա և զմտաւք մոլորեալս և զառածեալս մեղաւք զՂարիպս յիշեա։

Թ. 405ա.— Կարդայ և վայ ինձ ասա մեղաւորիս որ յամեն հնարից սատանայի խաբեալ եմ։

Թ. 411ա.— Կարդա և տես զողբս ծնաւղին։

Թ. 413ա.— Կարդայ և զիս յիշեա։

Թ. 416ա.— Ով բարեգութդ ամենայնի,
Որ ներեցէր քում ծառայի,
Գըթայ և յիս մեղաւք ի լի,
Ի Մարտիրոս մեռեալ ոգի։

Թ. 416բ.— ... որ ողորմի ստացողի գրոցս Մկրտիչ երիցուն և եղբաւրն իւրոյ Առաքելին, մանաւանդ և գծողիս։

(Այս թերթից սկսյալ այլևս տողատակի փոքր հիշատակարաններ չունի ձեռագիրը, բացի մի քանի տեղից միայն)։

Թ. 511ա.— Որոց աղաւթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Առաքելին և որդւոյն իւրոյ Մարտիրոս քահանային և մեղուցեալ գծողիս։

Թ. 524ա.— Յայսըմ վայրի վըտանգեցայ.
Ծանր սըգով յոյժ տըրտմեցայ,
Եւ արտասուաւք թաթաւեցայ.
Վասըն մեղացս իմ զոր յիս
կայ։

Թ. 528ա.—Որոյ աղաւթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Մկրտիչ Երիցուն, և պապին, և Առաքելին, մանաւանդ մեղուցեալ Մարտիրոս գծողի ամէն։

Թ. 528բ.— Ով պատուելի ծաղկաւղ մի մեղադրեր զի մոռացայ և փոկի տեղ չթողի վասնզի յոյժ տրտում էի։

Թ. 530բ.— Որ ողորմի ստացողի գրոցս Մկրտիչ երիցուն և Ամիրխանին և ամենայն արեան մերձաւորաց իւրոց։ Մանաւանդ երախտաւորաց և աշխատաւորաց և կարդացողաց և լսողաց, ամէն։

Թ. 538բ.— Կեանք և յոյս ազգի մարդկան.
Պարգևատու կենդանութեան,
Ինձ ձեռն տուր և ի դուրս հան.
Յալեաց ծովոյս տարաբերման։

Թ. 539բ.— Զցոբ յիշեցից զերանելին.

*Զայն որ յիշման է արժանին,*
*Թէպէտ յորդոցն է յՕսաւին,*
*Այլ գերագոյն քանց զՅակոբին։*
*Այնորիկ են յոյժ գովելին,*
*Եւ վկայեալ առ ի բարին,*
*Թէ այր արդար և ճըշմարիտ,*
*Եւ կատարեալ յամենայնին։*
*Զոր բանսարկէր չար Թշնամին,*
*Խընդրէր ի փորձ*
*պատերազմին,*
*Որում ըրեալ իշխանութիւն,*
*Յայտնի լինել քում ծառային։*

*Թ. 543բ.— Ով սիրելի Տեառն Յիսուսի,*
*Յոհաննէս Որոտման որդի,*
*Յարուցեր զիշխանին որդի,*
*Անուամբ մերոյ Տեառն*
*Յիսուսի։*
*Զքեզ աղաչեմ* (բ. 544ա)
*յամենայնի,*
*Եւ պաղատիմ աղերսալի,*
*Զի առաջի Տեառն Յիսուսի,*
*Յիշման առնես զիս արժանի։*
*Վասըն մեղացս իմ զազրալի,*
*Զոր գործեցի յայսմ աշխարհի,*
*Հայցեմ չյիշել յայնմ ատենի,*
*Ուր հատուցէ զվարձս ըստ*
*գործի։*

*Թ. 555բ.— Որոց բարեխաւսութեամբն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Մարտիրոս քահանային և փոքրիկին, ամէն։*

*Թ. 568բ.— Զլուսազարդ գրոցս ստացողս յիշեցէք ի Քրիստոս և լի բերանով Աստուած ողորմի ասացէք և ձեզ ողորմեսցի կարդ. և լս.։*

*Թ. 576բ.— Որ ողորմի ստացողի գրոցս Մկրտիչ երիցուն, և Յևատմելիքին, և գծողի գրոցս, ամէն։*

*Թ. 584ա.— Որոց աղաւթիւքն ողորմի Քրիստոս ստացողի գրոցս Պապին և Առաքելին, և ամենայն ազգականաց նոցին, մանաւանդ երախտաւորաց և աշխատաւորաց, և որք զամէնն ասեն ամէն, այլ և Մելիքին։*

*Թ. 585բ.— Զստացաւղ գրոցս զՄկրտիչ երէցն յիշեցէք ի Տէր, և դուք յիշեալ լիջիք ի Տեառնէ, ամէն։*

*Թ. 587ա.— Ով եղբայր բանս յաւրինակն չկար և ինձ կասկածաւոր թուեցաւ. վասն այն ի լուսանցն գրեցի։*

*Թ. 602ա.— Որ ողորմի ստացողի գրոցս և գծողի ամէն։*

*Թ. 613բ.— Որոց աղաւթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոց Մկրտիչ երիցուն և ծնողաց նորա, ամէն։*

*Թ. 622բ.— ... ողորմեա ստացաւղի գրոցս Մկրտիչ երիցուն և Յևատմելիքին և մեղապարտ Մարտիրոս գծողի և կարդացաւղաց և լսողաց, ամէն։*

*Թ. 655ա.— Բարեխաւսութեամբ սրբոցս ողորմեայ Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Յևատմելիքին, ամէն։*

*Թ. 675բ.— ... ողորմեա ստացողի գրոցս Մկրտիչ քահանային և մեղապարտ Մարտիրոս գծողի և կարդացողաց և լսողաց, ամէն։*

*Թ. 679բ.— Կեանք և յոյս ազգի մարդկան.*
*Պարգևատու կենդանութեան,*
*Ինձ ձեռն տուր և ի դուրս հան.*
*Յալեաց ծովոյս տարաբերման։*

*Թ. 680ա.— Մեծ վարդապետ և բաբունի.*
*Սուրբըդ Գրիգոր որդի ծերի,*
*Զքեզ աղաչեմ յամենայնի.*
*Եւ պաղատիմ աղերսալի։*
*Զի յորժամ գայ Տէրն ամենի.*
*Նստի յաթոռ դատարանի,*
*Վասն իմ հայցեայ յայնմ*
*ատենի.*
*Դասիլ և ինձ յաջակողմի։*

*Ողորմի ստացողի գրոցս Մկրտիչ երիցուն և ծնողաց նորին և մեղապարտ Մարտիրոս գծողի և կաւկողի թղթիս Յովաննէս սարկաւագիս զայլ և կարդացողաց և լսողաց առհասարակ ամէն։*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*(Կազմի առաջին երեսի կռնակում).*

*ԱԲԳ-ի գրչափորձեր։*

*Թ. 3ա.— Կարապետ Ցր. Սարգսեանից։*

*ԱԲԳ-ի գրչափորձեր։*

*Թ. 30ա.— (Բարեխաւսութեամբ սրբոցս Քրիստոսի Աստուած ողորմեա ստացողի գրոցս) Պարոն Թադօին, ծնողացն Մօվսէսին և Մարիամին և ամենայն զարմիցն, կարդացողաց և լսողաց, ես առավել գծողիս և որք ողորմին ասէք Աստուած և ձեզ ողորմեսցի, ամէն։*

*(Վերոհիշյալ Պարոն Թադոն հանդիսանում է ուշ շրջանի գրքիս ստացողը և հավանաբար ձեռագրիս վերանորոգողը։ Նրա և իր ծնողների անունները փոքրիկ թղթի վրա գրված հետագայում կպցված են ձեռագրում, պարբերությունների վերջում գտնվող փոքրիկ հիշատակարանների վրա։ Սույն հիշատակագրությունը, երբեմն երկու-երեք-չորս տողերով, կրկնվում է ձեռագրում մի քանի հարյուր անգամ)։*

*Թ. 191բ.— (Կա մի փոքրիկ սև կնիք 15×14 միլիմետր մեծությամբ, երկու օրինակ).*

*Քի. ծռ. Յոհան։*

*Թ. 192ա.— (Նույն կնիքից հինգ օրինակ).*

*Թ. 342ա.— Գոշին Մխիթարայ և ուսաւ ի սըմանէ զամենայն։*

*Թ. 344ա.— Աստուած ողորմի։*

*Թ. 482ա.— Զի սաի—ցայժ։*

*Թ. 483բ.— (Վերոհիշյալ կնիքից երեք օրինակ).*

*Թ. 484ա.— (Վերոհիշյալ կնիքից հինգ օրինակ)։*

## № 231

## ՃԱՇՈՑ

Թերթերը՝ 444։— Պրակները՝ 38, յուրաքանչյուրը 12-ական թերթից, իսկ Ա և ԼԷ՝ 7, Բ, Ի և ԼԴ՝ 11 թերթից։— Մեծությունը՝ 31,6×21,5×10,5 սմ.։— Նյութը՝ դեղնած, խոնացած և ցեցակեր հաստ թուղթ։— Կազմը՝ լաթակազմ տախտակ, որի կռնակն ու անկյունները կաշի են։ Կռնակում գրված է հետևյալը. «37—Ձեռագիր Սուրբ Գիրք—1531 և 1850—№ 219—37։ 37—Ճաշոց Գիրք (Աւետարան)։ A 37 (1531)»։— Պահպանակները՝ սկզբից և վերջից 7-ական թերթ հաստ բարակ թուղթ։— Վիճակը՝ բավարար, սակայն տեղ-տեղ խիստ ցեցակեր է եղել և հետագայում վերանորոգվել։— Գրությունը՝ երկսյուն։— Դատարկ էջերը՝ 1—7, 438—444, որոնք հետագայում են ավելացված վերանորոգության ժամանակ։— Տողերը՝ 35։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ ձեռագիրն ունի շատ սիրուն զարդագրություն, Ջուղայի դպրոցն հիշեցնող։ Կան երեք գեղեցիկ խորաններ (թ. թ. 10ա, 200ա և 267ա) և բազմաթիվ լուսանցազարդեր, թռչուններ, կենդանիներ, զմբեթներ, խաչեր, գազաններ, արծիվներ, ծառեր և ծաղիկներ։ Կան նաև երեք գլխազարդեր (թ. թ. 26բ, 66բ և 321բ)։ Ձեռագիրն ունի գեղեցիկ բազմաթիվ թռչնագրեր և զարդագրեր, երեք գազանագրեր (թ. թ. 26բ, 34ա և 200ա. այս վերջինը՝ շատ գեղեցիկ), չորս մարդագրեր (թ. թ. 10ա, 31ա, 31բ և 267ա. առաջինը և չորրորդը՝ շատ գեղեցիկ)։ Ձեռագրում կան երեք մարդագլուխ թռչուններ (թ. թ. 63բ, 216ա և 403ա), երկու միացյալ թռչնագիր-ձկնագիր (թ. թ. 49բ և 127ա), երկու ձկնագիր և զազանագիր (թ. թ. 275ա և 423բ), մի հատ միացյալ թռչնագիր և գազանագիր (թ. 141բ) և մի հատ էլ միացյալ զարդագիր և մարդագիր (թ. 103բ)։ Ձեռագրում կան նույնպես սրբերի և այլ մարդկանց բազմաթիվ սիրուն նկարներ, որոնցից հիշում ենք մի քանիսը միայն. Հայր Անտոն (թ. 41բ), Թեոդոս թագավոր (թ. 42ա), Ղուկաս ավետարանիչ (թ. 42բ), Վահան Գողթնացի (թ. 44ա), Հովհաննես ավետարանիչ (թ. 50բ), Ս. Սարգիս զորավար (թ. 56ա) , Պողոս առաքյալ (թ. 61ա), Ս. Գրիգոր Լուսավորիչ (թ. 115բ), Մարկոս ավետարանիչ (թ. 141բ), Ս. Հռիփսիմե կույս (թ. 290ա), Ս. Ներսես Հայրապետ (թ. 305ա), Մարիամ Աստվածածին (թ. 362բ), Հովհաննես Ոսկեբերան (թ. 426ա), Ս. Նիկողայոս (թ. 434բ) և այլն։— Գրիչը՝ Իգնատիոս։— Պատվիրատուն՝ Ղազար աբեղա։— Ծաղկողը՝ անհայտ։— Ժամանակը՝ ԺԷ—ԺԸ դարեր։— Վայրը՝ շատ հավանաբար Ջուղա, Սպահան։— Ստացողությունը՝ սույն արժեքավոր ձեռագիրը նվեր է ստացված Կալկաթայի Ս. Նազարեթ Եկեղեցու վարչությունից 1963 թվականի դեկտեմբեր ամսին, Վեհափառ Հայրապետի միջոցավ։ (Ձեռագիրը տեղ-տեղ խիստ վնասված է ցեցերից, սակայն հետագայում վերանորոգված է։ Սույն գրչագրում տեղ-տեղ միայն օգտագործված են հայկական խազերը)։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 56բ.— Ցետ տանի Սուրբ Սարգսին կիրակի աւր կարդա և զստացող սորին ... յիշեա և Աստուած ողորմի ասա։

Թ. 64բ.— Եշ. Վարդանանց զաւրավարացն կարդա և Աստուած ողորմի ասա Ղազար կրօնաւորին և իւր ծնօղացն։

Թ. 128ա.— Ճաշոյն կարդայ և զեղկելի գծողս յիշեա ի Տէր ով սուրբ ընթերցողք։

Թ. 149բ.— Ջստացող լուսազարդ Սուրբ Գրոցս զՂազար սրբամիտ կրաւնաւորն և զեղբարսն (երկու անուն ջնջվել են այստեղ) ... զՍտեփանոսն ծնաւղաւք հանդերձ յիշեցէք ի Քրիստոս, և մեղաց թողութիւն հայցեցէք առաջի մեղսաքաւիչ գառինն անմահի և Աստուած զձեր մեղքն ջնջէ, ամէն։

Թ. 160բ.— Ջստացող լուսազարդ գրոցս զհեզահոգի և զբարեմիտ կրաւնաւորն զՂազարս յիշեցէք ի Քրիստոս։

Թ. 275ա.— ՋՂազար աբեղայն՝ զստացաւղ լուսազարդ գրոցս, և զծնաւղսն իւր ....... և զայլ ամենայն արեան մերձաւորսն յիշեցէք ի Տէր, և լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք, և ողորմածն Աստուած ձեզ և նմա ողորմեսցի ամէն։

Թ. 280ա.— Նորոգեա և կենդանացո ի կեանս անվախճան ստացող Սուրբ Գրոցս և զհեզահոգի և զաստուածասէր կրաւնաւորն զՂազար և զծնօղսն իւր .......։ Արժանացո ողորմութեան քում և քեզ փառք ընդ Հաւր և ընդ Որդոյ այժմ և միշտ և յաւիտեանս։

Թ. 331ա.— ... ստացաւղի գրոցս, Ղազար աբեղային և եղբարցն Մկրտչին, Ստեփանոսին, Առաքելին, և ի ծնաւղաց սոցին, և ինձ մեղուցեալ Իգնատիոս գրչիս և Թուխթ կոկողին, ամէն։

Թ. 383բ.— Մեծի և հրաշափառ Սուրբ խաչին առաւօտուն կարդա և զեղկելի զ ..... ։

Թ. 384ա.— ... փառ և մեծատաւնիս Վարդ... իթիթ բուրաստանիս, քեզ երանի թէ հանդիպիս երբ լի սրտիւ ծնդրի իջնիս, յիշեա յաղաւթքդ զեղկելիս։

(Ձեռագրի վերջում գտնվող գլխավոր հիշատակարանն ընկել է)։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*(Կազմի առաջին երեսի կռնակում).*

Armenian Holy church ot Nazareth,
2, Armenian street, Calcutta.
Library & record room.
Presentnd by
Reterence No. 37
Register Folio N. 1
Date.

*Թ. 1ա.— Ճաշու Աւետարան, գրչագիր։*

*Թ. 10ա.— Փրկչի թիվն 1531, ծառայ Տեառն Տէր Մինաս Պետրոսեանս զայս Սուրբ Գիրքս ըստացայ 40 քառասուն ռուփի, ի Կալկաթայ ...... Տեառն ըստացայ սրբակրօն Տէր Յովանէս խաչիկեցին 40 քառասուն ռուփի այս Սուրբ Գիրքս։*

*Թ. 149բ.— (Փոքր հիշատակարանի անունները ջնջվել են և տեղը գրվել են հետևյալ անունները).*

*Աւետիս, զՄէլիքսէթ, զհայր Թումայ։*

*Թ. 160բ.— զՏէր Աւետիս։*

*Թ. 200ա.— 1859 ի Կալկաթայ զայս Սուրբ Գիրքս ըստացայ 40 ռուփի սրբակրօն Տէր Յովանէս խաչիկեցն, քառասուն ռուփի, ծառայ Աստուծոյ Տէր Մինաս Պետրոսեան։*

*Թ. 265բ.— Գիրեցաւ յիշատակարանս ի հայրապետութեան ...իթար եպիսկոպոսի, ըղիմուշխրցկէս, թէ դպիր ես զանարժան Մխիթարս յիշեա, Աստուած զձեզ յիշեա։*

*Թ. 275ա.— զԱւետիս, զԻսթեր, և զԹումայ, Մէլիքսէթ։*

*Թ. 280ա.— Աւետիսս, զԹումայ և զԻսթեր։*

*Թ. 331ա.— (Երեք հատ անընթեռնելի անուններ)։*

## № 232
## ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Թերթերը՝ *139։*— Պրակները՝ *12, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ԺԲ պրակը 8, Թ՝ 10 և Ժ՝ 13 թերթից։*— Մեծությունը՝ *27,5×20×3,6 սմ.։*— Նյութը՝ *դեղնած հաստ ողորկ թուղթ։*— Կազմը՝ *կաշեպատ տախտակ, կռնակը քայքայված, երկու երեսներին ճնշումով սիրուն զարդեր են նկարված։*— Պահպանակները՝ *մեկական թերթ սկզբից և վերջից։*— Վիճակը՝ *լավ։*— Գրությունը՝ *երկսյուն։*— Դատարկ թղթեր՝ *չունի։*— Տողերը՝ *25։*— Գծումները՝ *ճնշումով։*— Գիրը՝ *նոտրգիր։*— Զարդագրությունը՝ *ձեռագիրն ունի մի հասարակ գլխազարդ, մի լուսանցազարդ, մի թռչնագիր և երկու թռչուններ, բոլորն էլ թ. 1ա-ում։ Բացի այդ, ձեռագիրն ունի բազմաթիվ զարդագրեր, նկարված կարմիր թանաքով։*— Գրիչը՝ *անհայտ։*— Պատվիրատուն՝ *Աստվածատուր վարդապետ։*— Ծաղկողը՝ *շատ հավանաբար նույնինքն ձեռագրի գրիչն է։*— Ժամանակը՝ *1648 թ.։*— Վայրը՝ *Երուսաղեմ։*— Ծանոթություն՝ *սույն ձեռագիրը նվեր է ստացված Կահիրեի հայոց առաջնորդարանից, Վեհափառ Հայրապետի միջոցով, 1963 թվականի նոյեմբեր ամսին։*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Թ. 1ա.— Յառաջաբանութիւնք առաքելական կանոնաց։*

*Թ. 13բ.— Կանոնք և սահմանք Թաթէոսի առաքելոյն։*

*Թ. 18ա.— Կանոնք Փիլիպոսի առաքելոյն։*

*Թ. 19ա.— Կանոնք զոր եդին սուրբ հարքն զկնի սուրբ առաքելոցն։*

*Թ. 20բ.— Կանոնք Նիկիականք գլուխք։*

*Թ. 24ա.— Այլ կանոնք Նիկիական։*

*Թ. 25ա.— Անկիւրեա կանովք գլուխք Ի։*

*Թ. 27ա.— Կեսարան. կանոնք գլուխք Ժ։*

*Թ. 28ա.— Կանոնք Նիոյ Կեսարոյ գլուխք Ի։*

*Թ. 30ա.— Գանգրա կանոնք գլուխք ԻԴ, օգնեայ Յիսուս։*

*Թ. 33ա.— Անդիոքայ կանոնք ի գլուխք ԻԳ։*

*Թ. 36ա.— Ղաւոդիկեցոց կանովն գլուխք յիսունուհինկ, աւգնեա Յիսուս։*

*Թ. 39ա.— Կոստանդինուպալսի կանոնք Գ։*

*Թ. 39բ.— Եփեսի Սուրբ Ժողովոյն կանոնք են գլուխ Զ։*

*Դարձեալ նոցա այլ կանովնք գլուխ ԺԶ։*

*Թ. 52ա.— Գիր կանոնական մեծի և գիտնականի երանելոյն Բարսեղի եպիսկոպոսին Կեսարացոյ գլուխք Ծ։*

*Թ. 59բ.— Դարձեալ Սրբոյն Բարսեղի վասն ամէնեփին հեռանալու յաղգին կին առնելոյ։*

*Թ. 60բ.— Գիր կանոնի երանելոյն Եպիփաննու Կիպրացւոյ եպիսկոպոսի մեծի և առաքոյ։ Ա. Մարգարէի և նշանս գործի գլուխք Գ։ Բ. Վասն քահանայից և սարկաւագաց զգուշութիւն ի կանանց, յորժամ ի սպասաւորութիւն սրբոյ խորհրդոյն մատչեն։ Գ. Աւրէնս դրութիւն ոչ մերձենալ ի կին իւր սպարախ վասն քահանայից և սարկաւագաց։*

*Թ. 63բ.— Կանոնք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, գլուխ Լ։*

*Թ. 65ա.— Կանոնք Սրբոյն Ներսէսի հայրապետի, գլուխք ԼԳ։*

*Թ. 66ա.— Դարձեալ կանոնք յաւուրս Ներսէսի Մեծի, և Ներշապուհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի, գլուխք ԼԷ։*

*Թ. 69ա.— Սահմանք և կանոնք Սրբոյն Սահակայ հայրապետին։*

*Թ. 71բ.— Մեծ և երանելին Սրբոյն Սահակայ Հայոց հայրապետին. յաղագս քորեպիսկոպոսաց թէ որպէս պարտ է զկանոնական զկարգս հաստատուն պահել յեկեղեցիս։*

*Թ. 73բ.— Կանոն Սրբոյն Սահակայ Հայոց կաթողիկոսի լրումն հաւատոյ ամենայն աշխարհի Հայոց Մեծաց, գլուխք ԺԹ։*

*Թ. 77ա.— Սահմանք և կանոնք կարգի Աստուծոյ և Սրբոյ Եկեղեցոյ, զոր եդին վարդապետք հայոց ի նոյն լրութիւն։ Առաքելական և Նիկիական կանոնաց հաստատութիւն։*

*Թ. 87ա.— Յոհանն երանելոյն Յովաննու իմաստասիրի։*

*Թ. 89ա.— Նորին կանոնք, գլուխք ԺԹ։*

*Թ. 91ա.— Կանոնք Մովսէսի քերթողահաւրն, բան հարցողաց գլուխք հնկէտասան։*

*Թ. 93բ.— Կանոնք ժամարարաց, խրատք զգուշութեամբ։*

Թ. 96ա.— Սրբոց կաթողիկոսաց հայոց և այլ հոգեշնորհ վարդապետաց, կանոնք և խրատք զգուշաւորք քահանայից երկիւղածաց մանկանց եկեղեցոյ։

Թ. 134ա.— Սահմանք և կանոնք սրբոյն Եղիայի առ խրատ։

Թ. 136.— Յոհաննու Ոսկէբերանի յաղագս սահմանի կանոնաց կարգաւորաց որք գան ի խոստովանութիւն։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 139բ.— Յիշատակ է Սուրբ Երուսաղէմայ, ի ձեռն Տէր Աստուածատուր վարդապետին, հայրապետին Սուրբ Երուսաղէմայ, թվ. ՌՂէ (1648 թ.)։

## ՀԻՇԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակ) Ա այն եղեալ գնուագ (հետևում) թիւ 9։

Թ. 1ա.— Թիւ 9։ (Վերջին պահպանակ)։

Ձմեռաւոր պ. Մէլքի Ղատայ զմահտեսի զՅովհաննէսս յիշեալ֊էք զՔրիստոս զձեզ յիշէ ի ցեռ ատենին ամէն։

## № 233

## ԳԻՐՔ Ա, Բ, Գ, Դ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

Թերթերը՝ 271։— Պրակները՝ 35, յուրաքանչյուրը 8-ական թերթից, իսկ Լ՝ 3, Ա՝ 5, ԼԲ՝ 7, ԼԵ՝ 9 և ԻԹ՝ 10 թերթից։— Մեծությունը՝ 25,2×17,2×6 սմ.։— Կազմը՝ լաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով զարդեր են դրոշմված։ Եղել են երեք բռնիչներ, որոնք ընկել են։— Պահպանակները՝ սկզբից և վերջից երկուական թերթ հաստ, խունացած թուղթ։— Նյութը՝ դեղնած և խունացած հաստ, ողորկ թուղթ։— Վիճակը՝ լավ։— Գրությունը՝ միասյուն։— Դատարկ թղթերը՝ 1, 2, 270 և 271։— Տողերը՝ 18—19։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրություն՝ ձեռագիրն ունի մի սիրուն գլխազարդ և մի զարդագիր (թ. 3ա) սև թանաքով, մի սիրուն լուսանցազարդ և մարդու մի հասարակ նկար (թ. 69ա) կարմիր թանաքով, և երկու սիրուն զարդագիր (թ. 128բ) սև-կարմիր թանաքով։— Գրիչը՝ Ստեփաննոս։— Պատվիրատուն՝ Միքայել արքեպիսկոպոս Անտիոքի։— Ստացողը՝ անհայտ։— Ժամանակը՝ 1230 թ.։— Վայրը՝ Հեսուանց վանք (Քեսուն), Կիլիկիա։— Սանօրություն՝ սույն ձեռագիրը նվեր է ստացված Կահիրեի հայոց առաջնորդարանից, Վեհափառ Հայրապետի միջոցով, 1963 թվականի նոյեմբեր ամսին։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 3ա.— Թագաւորութեանց առաջին։

Թ. 69ա.— Ի թագաւորութեանց Երկրորդ սկիզբն։

Թ. 128բ.— Թագաւորութեանց Երրորդ։

Թ. 207ա.— Թագաւորութեանց Չորրորդ։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 206բ.— Տէր Յիսուս ի քո միւս անգամ գալստեանդ և ի հասարակաց յարութեանդ ողորմեա Տէր Միքայելի ստացողի գրոցս և ծնողաց իւրոց, ամէն։

Թ. 269բ.— Փառք ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդո և կենդանարար և ազատիչ Սուրբ Հոգւոյն. անբաժանելի և միասնական Սուրբ Երրորդութեանն. այժմ և հանապազ և յաւիտեանս յաւիտենից ամէն, ամեն, ամեն, թուականութեանս Հայոց ՈՀԸ (1230 թ.)։ Գրեցաւ տառս Թագաւորութեանց ի խնդրոյ աստուածապատիւ և առաքելաշնորհ արհիեպիսկոպոսին Անտիոքայ Տեառն Միքայելի և առաջնորդ սուրբ ուխտի Յեսուանց, ի վայելումն մանկանց եկեղեցւոյ, և ի յիշատակ հոգւոյ իւր և ծնողաց իւրոցն։ Եղև գըրաւ սորայ յ...ուս Յեսուանց ի վանսն ընդ հովանեաւ մաւրս մերոյ Սուրբ Սիոնի և Սուրբ Աստուածածնիս, և կենսակիր և սքանչելագործ Սուրբ Նշանիս, ձեռամբ յանարժան Ստեփաննոսի, ի թագաւորութեանն նոր օծեալ ընծային Հեթմոյ. և ի կաթուղիկոսութեան Տեառն Կոստանդեայ (Կոստանդին Ա Բարձրբերդցի, Կաթողիկոս ամենայն հայոց, 1221—1267 թ. թ.), ամէն։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 2բ.— Թիւ 1։

Թ. 39բ.— Ով պատուական ընթերձող եղբայր, յորժամ յայս տեղս ժամանես զառաջիկայ թուխթն շրջէ զմիուսն կարդայ. յորժամ զայն թփի զերկու երեսն կարդալով աւարտես յետ դարձիր զայս առաջիկայ տուփն կարդայ, երբ աւարտի, թուխթ մի անցիր և կարգն անկիր, զի վաւալյողն և կապողն ղալատ է կապեր և զանպիտանս յիշեսջիք։

Թ. 79ա.— Ո՞ րք է կարող որ աղքատին դէմ դառնայ։

Թ. 148բ.— Դարձեալ ով սքանչելի եղբայր, յորժամ յայս տեղս հասանես Ա թուխթ շրջէ զմիուսն կարդայ, երբ զայն տփի երկու երեսն աւարտես, յետ դարձեր զայս առաջիկայ թուխթն կարդայ, երբ աւարտի. Բ թուխթ այլ անցիր, զերրորդն կարդայ, երբ այն աւարտի, Բ տուփ այլ վի յետ դարձիր և կարդայ, յորժամ զայն այլ աւարտես, Ա տուփ շրջէ և զառաջիկայ միուսն ընթերձիր, ի կարգն կու անկանի և զեղկելիս յիշեայ։

Թ. 255ա.— Դաւիթ էրէց ծառա Յովանէսին։

(Ապա կա Դաւիթ անունը կապգրով գրված)։

Թ. 270ա.— ՈՀԸ, $678+552=1230$, $1915-1229=686$։

(Ձեռագրի վերջում կան երկու փոքր թղթիկներ, որոնց վրա գրված է հետևյալը).

(շեղագիր) 21 յուլիս 915, Գահիրէ.

(նոտրգիր) Ա երես ...քշոց չինել ետու...

*Աստուած ողորմի յիշատակ տվող...*
*Աստուած ողորմի ըմանդօհի...*
*Ելոց Հոգոց տո...*
Ի Երես ...*յ ողորմի և կա...*
*...ղայեցի Մարգարն փոքր...*
*...ծԹէ ի պրեխ մի բաժկու համար...*
*...ճ...ապրնե...*

## № 234

## ՏԱՂԱՐԱՆ

Թերթերը՝ *19։*— Պրակները՝ *3։ Ա և Բ՝ 8-ական թերթ, իսկ Գ՝ 3։*— Մեծությունը՝ *24,3×17,3×0,3 սմ.։*— Նյութը՝ *դեղնած և կեղտոտած թուղթ։*— Կազմը՝ *չունի։*— Պահպանակներ՝ *չունի։*— Վիճակը՝ *բավարար։*— Գրությունը՝ *միասյուն։*— Դատարկ թղթերը՝ *1ա—8պ։*— Տողերը՝ *30։*— Գծումները՝ *ճնշումով։*— Գիրը՝ *բոլորգիր։*— Զարդագրությունը՝ *ձեռագիրն ունի սակավ թվով, սակայն գեղեցիկ զարդագրություն։ Օգտագործված է միայն սև թանաքը։ Ձեռագիրն ունի երկու էջ, որոնք նկարված են ամբողջ էջի ծավալով։ Ա-ը (թ. 8բ) ներկայացնում է Մարիամ Աստվածածնի ավետումը։ Մի հրեշտակ և աղավնակերպ Ս. Հոգին ամպերի մեջ երկնքից իջնում են ցած, ծնկաչոք Մարիամ Աստվածածնի վրա, որի առջև բաց մի գիրք կա։ Բ-ը (թ. 14բ) ներկայացնում է Հիսուս և հինգ հրեշտակներ։ Հիսուսի կրծքին գրված է «Յս», իսկ ներքևում էլ «Մարիամ Մայր Տեառն»։ Նկարի ներքևում կապգրով գրված է «Յակոբ», որ զարդանկարչի անունն է։ Ձեռագրում կան նաև մի ծաղկազարդ նկար (թ. 1ա), մի լուսանցազարդ, մի գլխազարդ (արծիվ և ծաղիկներ) և մի մարդագիր՝ երկու հրեշտակներ և Աստվածածինը (թ. 9ա), մի զարդագիր, երկու տառ «Ած» (թ. 11ա)։*— Գրիչը՝ *անհայտ։*— Պատվիրատուն՝ *անհայտ։*— Ծաղկողը՝ *Հակոբ։*— Ժամանակը՝ *ԺԹ դար։*— Վայրը՝ *անհայտ։*— Ծանոթություն՝ *ձեռագիրը նվեր է ստացված ամերիկաբնակ տիկին Երվանդուհի Ասատուրյանի կողմից, 1964 թվականի հունվար ամսին։*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Հինգ էջ գրված է Մարիամ Աստվածածնի մասին Ճառընտիրից (թ. թ. 9ա—11ա) և 14 էջ հանգավոր ոտանավոր՝ նվիրված Ս. Կույսին, գրված Առաքել վարդապետի կողմից (թ. թ. 11ա—19ա)։*

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*Թ. 14բ.— (Կապգիր) Յակոբ (ծաղկողի անունը)։*

*Թ. 19ա.— ..... բարեխօսութեամբ Մօր քո անարատի, փառաւորեալ Տիրուհոյն մերոյ Սուրբ Աստուածածնի, և ողո*(բ. 19բ)*րմեա երգողի ճառիս՝ Առաքել վարդապետի, մանավանդ ընտացողի գըրոյս՝ (այստեղ ընդհատվել է հիշատակարանը)։*

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*(Ձեռագիրը դրված է մի ծրարի մեջ, որի վրա գրված է նվիրատուի անունն ու հասցեն).*

*Տիկին Երվանդուհի Ասատուրյան*
E Assadourian, 2210 Seymour Ave.,
Bronx 69, N. Y., U. S. A.

## № 235

## ՏԱՂԱՐԱՆ

Թերթերը՝ *68։*— Պրակները՝ *8, յուրաքանչյուրը 8-ական թերթից, իսկ Ա պրակը՝ 12 թերթից։*— Մեծությունը՝ *19,3×13,2×1,1 սմ.։*— Նյութը՝ *սպիտակ, մաքուր հաստ թուղթ։*— Կազմը՝ *չունի։*— Պահպանակներ՝ *չունի։*— Վիճակը՝ *բավարար։*— Գրությունը՝ *միասյուն։*— Դատարկ թղթերը՝ *1ա—3բ, 8ա, 11ա—13բ, 18բ—19ա, 20բ—21ա, 28ա—29ա, 36ա—37ա, 44բ—45բ, 50բ, 52բ—53բ, 59ա—61բ, 68բ։*— Տողերը՝ *անկանոն, 25—35։*— Գծումները՝ *ճնշումով։*— Գիրը՝ *նոտրգիր։*— Զարդագրությունը՝ *ձեռագիրն ունի բազմաթիվ գեղեցիկ զարդագրեր և թռչնագրեր, ծաղիկներ և լուսանցազարդեր։ Կան նաև ամբողջ էջի ծավալով չորս նկարներ (թ. թ. 8բ, 21բ, 37բ և 64բ), չորս զարդանկարներ (թ. թ. 27բ, 33ա, 42ա և 43ա), երկու գլխազարդեր (թ. թ. 22ա և 54ա) և երկու մարդագիր (թ. թ. 4ա և 56բ)։ Օգտագործված է միայն սև թանաքը։ Թվում է, թե ձեռագրի գրիչն ու ծաղկողը նույն անձն է։*— Գրիչը՝ *Հակոբ դպիր Ղահրամանյան սեբաստացի։*— Պատվիրատուն՝ *անհայտ։*— Ծաղկողը՝ *շատ հավանաբար նույնինքն Հակոբ դպիր։*— Ժամանակը՝ *1841 թ.։*— Վայրը՝ *Սեբաստիա։*— Ծանոթություն՝ *սույն ձեռագիրը նվեր է ստացված ամերիկաբնակ տիկին Երվանդուհի Ասատուրյանի կողմից, 1964 թվականի հունվար ամսին։*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Ձեռագիրն ունի բազմաթիվ տաղեր, երգեր և մեղեդիներ։*

Տաղ *Աւետեաց, Աստուածայայտնութեան, Ծննդեան, Ջրօրհնեաց, Տեառնընդառաջին, Ծաղկազարդի, Յարութեան (բազմաթիվ), Նոր Կիւրակէի, Հանբարձման, Հոգոյ գալըստեան, Վարդավառին, Սուրբ Աստուածածնի (բազմաթիվ), խաչելութեան, Վերացման խաչին, Վարագայ Սուրբ խաչին, Գիւտ խաչին, երևման Սուրբ խաչին, վասն չարչարանացն Քրիստոսի, Յօհաննու Մկրտչին, Սրբոյն Մինասայ, Սրբոյն Սարգսի, Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, Սրբոյն Յակոբայ Մծբնայ Հայրապետին, Սուրբ Առաքելոյն Յակօբայ, Սրբոյն Ստեփաննոսի, Սրբոյն Պետրոսի և Պօղոսի, Սրբոց Մարգարէից, Հայրապետաց, Սրբոց Առաքելոց և Սրբոց Մարտիրոսաց։*

(Շարունակելի)